

Օդայով Խ.

19343

Հիմնական Տակ

891.99

0.65

1909

(37)

Ձ. A.V.5.367
Խ. Պ Ս Ի Պ Ո Վ

ԷՄԲԱՍՏԻ

ՄԱՀԵ

ԳԻՆԵ Ե Յ ԿՈՊ.

առաջին սպազմութիւն

С м е р т ь

не покорнаго

Сочинитель X. Селищев

В. А. К. У.
Типогр. Н. А. Эрикяннова,
8-й пр., Ե. Ա. Երեվանց տանը
1909 г.

891.99

0-65

2009

Արմ.

2-40252

ԱՀ-823

891. 99

0-65

2-4025a

ՆԵՐ իմ անմուսնալի

Ծնողներիս

ԱՀ. Հ 22349

ՀՀ-823

ՀՄԲՈԱՏԻ ՄԱՀ

Թ... Քաղաքի հիւանդանոցում, դէպի փողոցը գտնուող պատուհանի առաջ մահճի վրայ պարկած էր մի երիտասարդ, գունատ և նիհար դէմքով: Երիտասարդի դէմքը ցոյց էր տալիս նրայ հոգեկան դրութիւնը. ու մահն էր դրոշմեկ նըրայ վսեմ ճակատին: Նա անվերջ մաքառում էր, մահւան չար հրեշտակի հետ: Երբեմն երիտասարդը աչքերը հառում էր հեռուն, նայում էր ջինջ երկնակամարին երկար, երկար... ու լուռ մրմնջում:

— 0° — կապուտակ երկինք, որքան գեղեցիկ, որքան հմայիչ ես դու: Ա՛խ, եթէ ես լինէի մի բազէ... ես անվերջ կսավառնէի քո անհուն եթերում, առանց հանգստանալու. և կսլանալի, միշտ հեռնայ: — հեռնայ... գէպի վար հորիզօնը... պտոյտներ կգործէի քո ջինջ կամարի, տակ կը-

Կ5048-ահ.



29324-63

սլանայի վար, կուլանայի վեր, անվերջ, — անվերջ... Երկինք, բացիր քո կուրծքդ, տար ինձ սեաթոր ուժեղ թեր և ես միշտ կուլանամ քո կամարի տակ միշտ ուրախ, միշտ երջանիկ... Բայց աւաղ, ես այստեղ եմ, այս գժոխք երկրում, ուր մարդարարածը չունի իւր տպատիւրաւնքը իւր անձի վրայ, այստեղ թափառում է բռնութիւնը և անարդարութիւնը: Անգութ երկինք, ինչու դու երջանիկ ես, իսկ քո կամարի տակ ըըջող մարդ անուն կրողը, դըքբախտ ու հալածական: Ռւըեմն եթէ նրանք երջանիկ չեն, այլ դժբախտ, մի ուրախանալ և դու, այլ մասսիր քո վէճ ճակատը, կուտակիր մե ու մութ ամպեր, ու փոթորկալով շանթահարիր գիշատիչ բորենուն:

Նա այլես չկարողացաւ շարունակել իւր խօսքը ու ընկաւ բարձին թուլացած:

Հանկարծ բացուեց հիւանդանոցի միջին դուռը և ներս մտաւ մի վայելչակազմ և բարձրահասակ օրիօրդ: Դա հիւանդանոցի դժութեան քոյրերից էր, որը ազգով հայ. նա զգուշութեամբ մտեցաւ մահճին ու ասայ:

— Վահրամ, ի՞նչպէս ես զգում քեզ այժմս...

— Ոչինչ... այժմ մի փոքր լաւ եմ չեղինէ...

— Վերքդ չի տանջում...

— Այնքան էլ ոչ. մի բաժակ ջուր տուր ինձ, չեղինէ...

— Իսկոյն... ասաց օրիօրդը և լցնելով բաժակը տուեց վահրամին...

— Օ՞ք... չեղինէ, որքան ծանր է, շարունակ ընկած լինել անկողնում...

— Մի հուսահատուիր վահրամ, շուտով կառողջանաս...

— Կառողջանամ. դու չես ծաղրում չեղինէ...

— Ծաղրել... ի՞նչ ես ասում, ընդհակառակը ես լուրջ եմ խօսում քեզ հետ...

— Այս եթէ այդ ճիշտ լինէր...

— Այդ միայն քեզ է այլպէս թւում, դու արդէն բաւականին կազդուրել ես, բայց ահա մայրդ զալիս է:

Այդ վայրկեանին, ներս մտաւ մի բարձրահասակ կին նիհար գէմքով, ճակատին պատած էր կնճիւռներով, դա սկ բախտի դաժան ճակատագիրն էր, որ իւր կնիքն էր զրոշմէկ խեղճ կնոջ ճակատին: Նա մօտեցաւ որդուն, մայրական ջերմ համբոյրը զրոշմեց իւր որդու ճակատին և ասաց:

— Վահրամ, զաւակս, ինչպէս ես այժմ. առողջ ես այնպէս չէ...

— Այս մայրիկ, ես արդէն առողջ եմ, և շուտով շատ շուտով դուրս կը գամ, ինձ համար գժոխք դարձած, այս սկ բանտից. և կրկին կը-

ապրենք առաջւայ նման երջանիկ, հարցրու չե-
զինէին, եթէ ինձ չես հաւատում, նա ասում է,
որ ես բաւականին առողջացել եմ, այնպէս չէ
չեղինէ, դառնալով դէպի նրան:

— Այս մայրիկ, վահրամը արդէն բաւա-
կանին կազգուրւել է և շատ շուտով դուրս կը-
դայ այստեղից, պատասխանեց չեղինէն:

— Դու բոլորին մի մտածիր զաւակս, ես
ամեն ջանք գործ կդնեմ, միայն թէ դու առող-
ջանաս...

— Բայց ինչու, այդպէս նիհարել ես մայ-
րիկ. գիտեմ դու մտածում ես իմ մասին, նոյն-
իսկ անքուն գիշերներ, արտասունքը աչերիդ,
ձեռքերդ առ Աստուած ուղղած երկնքից գութ
ես հայցում: Բայց երկինքը նոյնպէս չէ լսում
քո սրամորմոք աղերսանքը, նա չէ լսում քո
սրտի խոր ճեղքերից դուրս թռած խուլ հասա-
սրտի ճայնը, նա լուռ է և անտարբեր, նա
չանքների ճայնը, նա լուռ է և անտարբեր, նա
չէ կամենում լաել վշտահար մօր սրտից դուրս
չէ կամենում լաել վշտահար մօր սրտից դուրս
աղերսանքը: Օ՛... որքան անգութ է եր-
կինքը, բայց որքան գթոս մայրերը, ինչդ մայ-
րեր...

Նրա աչքերից դուրս ցայտեցին, երկու խո-
շոր արցունքի կաթիւներ, սիրալ պայթեց ինչ-
պէս ծովի փրփրագեղ ալիք ու դառնագին նեկե-

կաց, մայրը նոյնպէս չկարողացաւ զսպել իրեն,
գրկելով իւր զաւակին մայրական ջերմ սիրով
լցուած համբուրեց նրան ու սեղմեց իւր կըրծ-
քին: Այսպէս արտասում էին երկար... մինչև
որ հանգստացան երկու պայթած սրտերը. Հեղի-
նէն իւր ինչ անելը չգիտէր. շւարել կանգնել էր
վահրամի գլխավերկը:

— Բաւական է մայրիկ, ասաց միխթարե-
լով մօրը—իզուր մի արտասուիր, արտասունքը
մեզ ոչ մի օգուտ չի տալ. տես ես արդէն ա-
ռողջ եմ, ուշըս վրաս, խօսում եմ լաւ, ել ին-
չու լալ, ոչ կարիք չկայ լաց լինելու: Վերա-
դարձիր տուն, հանգիստ և խաղաղ սրտով:

Խեղճ կինը համբուրելով որդու ճակատը,
վեր կացաւ և ուզում էր հեռանալ. բայց մի
ներքին ձայն կարծես ստիպում էր նրան չհեռա-
նալ, այլ մնալ իւր զաւակի մօտ և հետեւ նը-
րա ամեն մի շարժուածքը: Նրա մտքով անցաւ
մի զահրուրելի պատկեր. նա տեսաւ պատկերա-
ցած իւր աչքի առաջ իւր որդու դագաղը, որին
շրջապատած էին մարդիկ սև հագւած, սպացող
կանայք, որոնք հետեւում էին դագաղին. իսկ
ինքը դիւական քրքիջը երեսին գնում է դագա-
ղի յետեկից պարում, ծիծաղում և մերթ ընդ
մերթ վար դնել տալիս դագաղը ուղղում ծա-

զիկները և կըկին հետևում դադաղին, նա ճշաց յանկարծ անհետացաւ սև պատկերը:

— Վահրամ դաւակո, ճշաց նա և ընկաւ որդու կրծքին:

— Մայրիկ, մայրիկ, բաւական է...

— Այս, Վահրամ, ինչ էի արել ես, ինչ մեղք էի գործել ես Աստուծոյ առաջ, որ ինձ այսպէս դառն կերպով պատժեց Աստուծ. միթէ միակ մեղաւորը ես էի Նրա առաջ:

— Ոչ մայրիկ. քեզ նման մեղաւոր մայրեր շատ կան, դուք մեղաւոր էք որովհետեւ մայր էք դաւակ էք ծնել: Հանգստացիր մայր, հապա ինչ անեն այն մայրերը, որ նոյն իսկ որդոց շիրիմների տեղն անդամ չգիտեն, ինչ անեն այն խեղձերը: Ո՞չ մայրիկ. դու չըպէտք է տխրես, այլ պէտք է ուրախանաս, որովհետեւ քո որդին մեռնում է քո աչքի առաջ, քո որդին մեռնում է ժողովուրդի համար, այն ժողովուրդի համար, որը դարերից ի վեր հեծեծում է բռնութեան լծի տակ. քո որդին կուեց այդ բռնութեան դէմ, կուեց ազատութեան համար, մինչև որ կնկնի նոյն ազատութեան հանապարհն: Քո որդին մայր գնում է այնտեղ, ուր որ գնացին նրանք, այն ըմբոստ ողիքը. երկնքի ճակատը կարմրել է, ինչպէս դժոխքի

վառ հնոցը, դա իմ ընկերների արիւնն է, որ կարմրացրել է նրա ճակատը. և ահա իմ արիւնն էլ պէտքէ խառնուի այդ ըմբոստների արեան հետ: Այդ արիւնն է մայրիկ, որ հազարաւոր թմրած ողիներին կըմբոստացնէ, և կնետէ նոցայ կռի դաշտը: Կլցնի նոցայ սրտերը, վրէժի արդար զայրոյթով ու կազմելով մի գոռ բանակ, առաջ կնթանան այն ճանապարհով, որի ամեն մի քարը, ամեն մի ծաղիկը. ներկւած է հարազատ ընկերների արիւնով: Եւ այդ արիւնոտ ճանապարհն, ձեռք կրերեն այն ազատութիւնը, որի համար կուեցին մեր նախնիքը: Կոչնչացնեն չար բորենու դաւահիւթ բոյնը. և կտիրէ ազատ լոյսը: Այն ժամանակ մայրիկ, մեր ոսկոնները հանգիստ կառնէ, մեր սառը շիրիմներում, հափառեան... հաւիտեան...

Նա վերջացնելով իւր խօսքը, գլուխը թաղեց բարձերի մէջ և երկար ժամանակ լուռ էր: Իսկ մայրը որդու խօսքերից արձանացած, լուռ կանգնել էր աչքերը լայն չուծ...

Մի բոպէ տիրեց լուռթիւն:

Փոքը ինչ ուշքի գալով, նա մօտեցաւ որդուն, համբուրեց նրան վերջին անգամ ու ասաց:

— Որդեակ իմ. թէպէտ երկինքը լուռմ է, բայց մայրական արդար բողոքի առաջ կպայթի

երկնքի լոռվթիւնը և իւր ահեղ շանթերը կարձակի բռնակալի գլխին։ Ես այլևս ոչ մի խօսք չունիմ ասելու։ — Վերջին անգամ համբուրեց որդուն և քայլերը ուղղելով դէպի դուռը։ արագ հեռացաւ։

Հեղինէն շվարէլ էր, նա տեսաւ ամեն ինչ, լսեց բոլորը և զգաց, որ իւր սիրտը ճնշում է այդ բոլորի ներքոյ։ Նա մօտեցաւ մահճին և նստեց մօտը ու ասաց։

— Վահրամ, ..

— Ինչ է Հեղինէ...

— Դու լսեցիր նրա խօսքերը...

— Այս լսեցի. դա մայրական սրտի անհուն բողոքն է Հեղինէ։ Նա բողոքում է երկնքի անարդարութեան դէմ։

— Խեղճ կին...

— Խեղճ իմ մայր... որքան փոխւել, որքան նիհարել է, օ... անգութ ճակատագիր, որքան դաժան ես դու։ Հեղինէ, զիտես թէ որքան ծանր է մօր համար, տեսնել իւր հարազատ զաւակին մահւան ճանկերում, զիտես թէ այդ մայրերը ինչպիսի ցաւերով են մեծացնում այդ զաւակներին։ Նոքա իրենց երիտասարդ կեանքերը խաւարեցնում են, զրկուում ամեն մի զըւարձութիւնից, անքուն գիշերներ պահակի նը-

ման հակում, օրօր կանչում, որ ինչ է իւր բալէն մեծանայ, հսկայ տղամարդ դաւնայ, որ նըրանով գոնէ ուրախանայ խեղճ մայրը։ Բայց աւաղ... դաժան ճակատագիրը ուրիշ կելպ է արնորինել։ Նա սպասում է այնքան, մինչև որ մայրը կմեծացնէ իւր դաւակին, հէնց որ տղամարդ է դառնում, այն ժամանակ նա մեկնում է իւր արիւնոտ թաթը, և խլում մօր գրկից իւր սիրած ու փայփայած զաւակին։ իսկ մայրերը այդ վշտի ծովերը, հեծեծում են անողոք բնութեան հարւածների տակ։

— Բնութիւնը ևս չար է Վահրամ, — ասաց Հեղինէն։

— Այս դժողքում, ամենքն էլ չար են։ Հեղինէ, ամենքը...

— Այս... բայց ես ձանձրացնում եմ քեզ իմ խօսակցութիւնով, այժմ էլ մի փոքր հանգստացիր, իզուր քեզ սկ մաքերով մի տանջիր։ Ասաց Հեղինէն ու հեռացաւ։

Հիւանդանոցում տիրեց քար լոռվթիւն...

Գիշեր էր...

Ամենուրէք խաւարն էր թագաւորում, ոչ

մի ձայն, ոչ մի շատել չէր լսւում, ամպերը ու ու մոալը, եկել ծածկել էին երկնքի երեսը քամին շառաչում էր անվերջ և մերթ լնդ մերթ զարնւելով հիւանդանոցի պատուհաններին մի խուլ դղրդիւն էր հանում ու դարձեալ հեռանում, զարձեալ զարնւում, և այդպէս շարունակ շառաչում էր անվերջ, ու մահը սփռելով իւր չորս կողմը; Վահրամը վեր կացաւ նայեց դուրս կատարւող քաօսին ու մրմնջաց:

— Օ... վերճապէս, ու քողը պատեցիր երեսիդ, ահա այդպէս, այդպէս, հիմայ լաւ է. այդ խաւարի մէջ պատրաստիր, կարմիր քառ, աւելի կարմիր քան արիւնը ու տարածիր հեռնւն... հեռնւն... որտեղ բորենու բոյնն է: Ու պայթիր նրա զլիկին ինչպէս մի փոթորիկ. և նա կընկնի, կնկնի, առանց բարձրանալու հաւիտեան: Իսկ յետոյ վերցրու երեսիցդ այդ ու քողը, որ պայծառ լուսինը լողայ քո ջինջ և կապոյտ երեսին. ազատ... երջանիկ...

Նա լոեց... լուռ էր և երկինքը...

Այդ վայրկեանին հիւանդանոցի միջին դուռը բացւեց, ներս մտաւ Հեղինէն: Նա գունատ էր, մի ներքին վիշտ օձի նման կրծում էր նըրա ներսը նա կամենում էր խեղել այդ վիշտը ու փախչել հեռուն, որ չտեսնի այլիս այդ

դժողովում կատարյալ բոլոր տանջանքները: Բայց երբ որ նրա աչքի առաջ պատկերանում էր Վահրամը, տանջւած և գունատ դէմքով. այդ վայրկեանին նա անգօր էր գտնուում լսելու իւր ներքին ձայնին: Նա մի բոպէ ուշքի դարվ, աջ ձեռքով հետ քաշեց իւր ճակատին հաւաքւած խոպոպիկ մազերը ու գգուշութեամբ մօտեցաւ Վահրամի մահճին, կոացաւ դէպի նրան ու մի քաղցը համբոյը քաղկց նրա այլուող շուրթելից. Վահրամը հետ նայեց աչքերը լայն բացելով իւր հայացքը նետեց Հեղինէին: Հեղինէն աւելի գունատեց ու հեկեկալով չսքեց Վահրամի առաջ և ընկաւ նրա գիրկը:

— Հեղինէ...

— Վահրամ ներիր ինձ, ասա ի՞նչ կարող էր անել մի սիրատենչ աղջիկ, որը տեսնում է իւր սիրածին մահւան անկողնում. Վահրամ, իմ տանջւած սրտի կրտաւած սիրոյ լարերի վերջին հառաչանքներն են, չդատապարտես ինձ, ես մեզաւոր չեմ:

— Հեղինէ, գոչեց բարձրածայն Վահրամը:

— Վահրամ, ներիր ինձ ներիր...

— Այդ ես վազուց գիտէի հանգստացիր Հեղինէ... մօտեցիր, մօտեցիր ինձ, ահա այդպէս այժմ լաւ է, մի համբոյը... ահա այդպէս

օ... որքան գեղեցիկ ես դու, որքան գրաւիչ... բայց նայիր երկնքին տես որքան խաւար է, նա գեղեցիկ չէ... իսկ դու օ՛... հրեշտակս դիր այդ գոխարիկ գլուխգ այս այրվող կրծքիս, որը վառւում է ինչպէս դժոխքի վառ հնոց։ Այժմ նայիր հեռուն, որտեղից պէտք է ծագի ազատութեան արևը. ահա այդ խաւարը տեսնում ես Հեղինէ, այդ խաւարի մէջ պատրաստում է կարմիր քաօսը։ Բայց ահա նայիր. սպասիր... ցց... տեսնում ես, տեմնում են, այն քաջերին, նոքայ կուռում են և ինձ օգնութեան են կանչում, սպասէք—սպասէք գալիս եմ գալիս եւ նա արագութեամբ դուրս թռաւ Հեղինէի գրկից և վագեց գէպի դուռը, բայց աչքերը սեացան գլուխը պտտեց ու մի աղիողորմ ճիշ արձակելով փուեց գեանին։

Հեղինէն վագեց գէպի նրան ընկաւ կրծէին ու ճշաց։

— Վահրամ։

Բայց նա լուռ էր և անշարժ, հիւանդանոցի բարձր պատերն էին արձագանք տալիս Հեղինէի ձայնին. նա երկար ժամանակ ընկած էր նրա կրծքին և լուռ հեկեկում էր. սենեակում վառվում էր մօմը և իւր ազատ լոյսը գցել էր Վահրամի գունատ դէմքին ու ազատ կերպով լուսա-

ւորում էր նրա վեհ դէմքը։ Հեղինէն վեր թռաւ տեղից և մի վայրենի քրքիջ արձակեց։

— Հա, հա, հա, Վահրամ։

Նա արդէն խելագարւել էր։

Հեղինէն արագութեամբ դուրս թռաւ փողոց և սլացաւ լայն փողոցն ՚ի վեր հերարձակ մագերով. ինչպէս գիշերային ոգի։ Հեռուից ժամանակ առ ժամանակ լսում էր նրա դիւական քրքիջը։

— Հա, հա, հա, Վահրամը։

Իսկ քամին դեռ շարունակում էր ոռնալ և իւր սկ մահը սփռել, գոռալով։

Վրւ... վըր... վըր... վըրզ...



APM.

2-4025

19395

2013

